

ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՅ ԳԱՂԹՈՋԱԽԸ

ՌԱՅԻԿ ԱՐԲԱՆԱՄԱՆ

Հետաքրքիր արևելյան հայկական գաղթությաններից ամենանշանավորը Սինգապուր կղզու և նույնանուն քաղաքի գաղթությանն է։ Դեռևս շատ վաղ ժամանակից Մալակկայի հարավային մասերը, հատկապես Մալակկա քաղաքը հայտնի էին հայերին, բայց Սինգապուր կղզին դուրս էր մնացել նրանց տեսողատից։ XVIII դ. վերջերին անգլիական գաղութարարները նվաճեցին Սալարագուին արևելյան այս շրջանները և նախկին ինը տեղական իշխանություններից ստեղծեցին «Նեդուցային» կամ «Թագապատկան գաղութները»։ Սինգապուր կղզում՝ ծովափին, անգլիական գաղութային բաղադրականության նշանավոր գործիչ Թ. Ռաֆլզը 1819 թ. հիմնեց առևտրական ֆակտորիա, որը և հետագայում դարձավ Սինգապուր քաղաքի հիմքը։ 1824 թ. Մալակկայի Զոխոթայի սուլթանությունը Սինգապուր կղզին ամբողջությամբ հանձնեց անգլիական Արևելա-Հնդկական առևտրական ընկերությանը¹։ Թ. Ռաֆլզի հիմնած փոքրիկ ավանը շատ արագ սկսեց աճել և շուտով դարձավ հարավ-արևելյան Ասիայի նավահանգստային խոշորագույն առևտրական կենտրոններից մեկը։ Այդ ժամանակներից էլ հայերը սկսեցին մուտք գործել Սինգապուր²։ Տեղի հայության պատմությանը քաջածանոթ Ա. Միրզոյանը, խոսելով գաղթությանի կազմավորման մասին, հավանական է համարում, որ հայերը Սինգապուրում եղել են դեռևս մինչև անգլիացիների գալը՝ 1819 թվականից։ Ա. Միրզոյանը համոզված է, որ դեռևս 1820 թ. այնտեղ կային հայկական առևտրական երեք ընկերություններ³։ Հայտնի են այդ ընկերությունների ղեկավարների անունները՝ Արիստակես և Հարություն Սարգսյաններ, Խայիկ Մովսեսյան, որոնք այստեղ էին տեղափոխվել Մալակկայից⁴։

Առաջին շրջանում Սինգապուր եկողները հիմնականում մադրասահայեր էին, ապա իրենց հայրենակիցներին հետևել սկսեցին Հնդկաստանում և նրա հարևան երկրներում ապրող շուրջահայերը։ Սրանց մեծ մասը հմուտ, բազմափորձ, եվրոպական վաճառականների հետ մրցակցությունում թրծված վաճառականներ էին, որոնց հիմնականում այստեղ էր հասցրել առևտուրը։ Սինգապուր հասնելուց և հաստատվելուց անմիջապես հետո հայերը հիմնեցին իրենց առևտրատներն ու ընկերությունները և համարձակ մրցակցության մեջ մտան անգլիացիների և օտարերկրյա մյուս վաճառականների հետ։ Սակայն Սինգապուրում կազմավորվող հայկական գաղթությանը չէր կարող բաղկացած լինել միայն մեծահարուստ վաճառականներից։ Նրանց հետ այստեղ էին տեղափոխվում նաև շատ այլ հայեր, որոնք զանազան ծառայություններ և հանձնարարականներ կատարողներ էին հայկական առևտրատներում, ընկերություններում և այլ հիմնարկներում⁵։

Սինգապուրի բարձրացումից հետո, նրանից ոչ այնքան հեռու գտնվող Մալակկա քաղաքը կորցրեց իր նախկին առևտրատնտեսական նշանակությունը։ Դրա հետևանքով շատ վաղուց, դեռևս հուլանդական ներխուժումներից առաջ ստեղծված Մալակկայի հայկական գաղթությանը երկու հարյուր հիսուն տարվա փարթամ կյանքից հետո սկսեց անկում ապրել⁶։ Գործելու լայն շրջանակներից և հնարավորություններից զրկված հայերը գրեթե ամբողջությամբ տեղափոխ-

¹ C. B. Burcley, An anedoctal history of old times Singapore, vol I, Singapore, 1902, p. 270.

² Fr. Ar. Mirzoian, The Comprehensive armenian adress book of Australia, Sydney, 1983, p. 21.

³ Նույն տեղում։

⁴ «Արև», Կահիրե, 17. XII. 1957։

⁵ Ա. Գ. Արբաբյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 314—315։

⁶ «Արև», 18. XII. 1958։

վեցին Սինգապուր 1820—1822 թթ. Սինգապուր տեղափոխվեց նաև Հարևան Պինանգ կղզու հայու-
թյան մեծ մասը¹:

Այսպիսով, Մալազույն արևելքի առևտրաշահ նավահանգիստ քաղաքը, իր մեջ առնելով
Հնդկաստանից, Պինանգից, Մալակկայից և Հնուվոր արևելքի մյուս շրջաններից եկած հայերի,
դարձավ կազմակերպված հայկական գաղթօջախ, ուր հայերը ծավալեցին յայն գործունեությունը
Սինգապուրի հայկական գաղթօջախի պատմության մասին խոսելիս Ա. Միրզոյանը նշում է, որ
հայերի դերը Սինգապուրի պատմության մեջ գերակշռում է նրանց թվին՝ և հավանական է
համարում, որ նրանց թիվը հասել է մի քանի հարյուրի²։ Ներգաղթող հայերը Սինգապուրի
կենտրոնում կողք-կողքի կառուցեցին բազմաթիվ տներ, խանութներ, պահեստներ և այլ շենքեր։
Հայերին պատկանող այդ տները կազմեցին Սինգապուրի կենտրոնական փողոց-հրապարակներից
մեկը։ Երբեմնի հայաշատ այդ փողոցը մինչև այսօր կոչվում է իր հին՝ «Հայկական փողոց»
անունով։ Այն Սինգապուրի շուրջ հայանուն փողոցներից ամենամեծն ու հնագույնն է³։

Հետաքրքիր է, որ Սինգապուրում հաստատված հայերը ուշի-ուշով հետևում էին Նոր Զու-
ղայում և մյուս հայրենիքում կատարվող իրադարձություններին։ Նրանք քաղաքացիական էին
Անդրկովկասում ուսական բանակների առաջխաղացման մասին և Հայաստանի փրկությունը
Խուրթ-իրանական դարավոր լծից կապում էին Ռուսաստանի հետ։ Ռուսական բանակների կող-
մից Երևանի ազատագրման և հայ ժողովրդին ուսական հովանավորության տակ առնելու լուրը
հասավ նաև հնավոր Սինգապուրի հայությանը։ Այստեղ էլ, Արևելքի մյուս գաղթօջախների
հայության նման, կազմակերպեցին հանդիսություններ, ժողովներ, ուր սրտաբուխ, շնորհակա-
լական շերտ խոսքեր ասվեցին ուս ազատարար ժողովրդի հասցեին, էջմիածին և Ռուսաստան
ուղարկվեցին շնորհակալական նամակներ և այլն։ 1828 թ. Սինգապուրից կալվաթա ուղարկած
նամակում Սինգապուրի հոգևոր հովիվ Գ. Տեր-Աստվածաբանն իր բարեկամ Գ. Զաքարյանին
գրում էր. «Բարեհաճոյ ազգասիրական իղձ գերայարգելոյ սենեռնալ ի խորս սրտի իմոյ քաջալերեալ
խրախուսեաց ինձ դիմողութիւն իմ, որ յաղագս ազատութեան Հայրենեաց մերոց դուզաքնն իմն
սովիստի ի գիր արձանացուցանել ի խորհրդաւոր աւուրս նաւակատակաց սուրբ խալին, որ եղև
փրկութիւն մեր, ի լրումն փափագանաց սրտի յոյժ, որ ցարդ դեգերիս երջանկութիւնս քում բերկ-
րեալ և ցնծալ...»⁴։

Ինչպես ամեն տեղ, այստեղ էլ կազմավորված հայկական գաղթօջախի առաջին հոգսն է
եղել տեղում հայկական եկեղեցի կառուցելը։ Դա, անշուշտ, աղոթատուն ունենալու մտահոգու-
թյուն էր միայն։ Սինգապուրում էլ հայկական եկեղեցին հանդիսանալու էր այն օջախը, որի
շուրջը պետք է հավաքվեին տեղի հայերը, որտեղ հոգևոր պետերից բացի պետք է հոգային
ազգային, տնտեսական և շատ ու շատ այլ հոգսեր։ Կառուցվող եկեղեցին դառնալու էր նաև հայ-
րենիքի և գաղթօջախի կապող օղակը։

Բարեբախտաբար պահպանվել են Սինգապուրի հայոց եկեղեցու հիմնադրումից մինչև 1895 թ.
տոմարները, որոնք բավական մանրամասն և հետաքրքիր փաստեր են պարունակում Սինգա-
պուրի հայկական գաղթօջախի ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ։ Այդ տոմարներից
իմանում ենք, որ հենց կազմավորման սկզբից, դեռևս եկեղեցի չունեցած ժամանակ, հայերը
Սինգապուրում ունեին ազգային եկեղեցական կառավարչական մարմին⁵։¹¹, որն էլ, հավանա-
բար, ղեկավարում էր գաղթօջախի ազգային կյանքը։ «Կառավարչական մարմինը» 1830 թ.
դեկտեմբերի իր հերթական ժողովներից մեկում գաղթօջախի ներքին կյանքի վերաբերյալ ըն-
դունել է մի շարք որոշումներ։ Այս ժողովում էլ հայերը համաձայնեցին են եկել Սինգապու-
րում եկեղեցի կառուցել։ Ի դեպ, այդ ժամանակ այստեղ ապրող եվրոպական ազգերից ոչ մեկը
դեռևս եկեղեցի չէր կառուցել։ 1835 թ. հայերը ձեռնամուխ եղան եկեղեցու կառուցմանը, որն
ավարտվեց 1836 թ.։ Նույն թվի մարտի 24-ին այն օծվեց և ժողովրդի ցանկության համաձայն
նրան տրվեց սբ. Գրիգոր Լուսավորչի անունը¹²։ Գրեթե նույն ժամանակ սբ. Գրիգոր Լուսավորիչ
եկեղեցու ընդարձակ բակի մեջ կառուցվել է բավականին ընդարձակ երկհարկանի տուն, որը,

¹ Ա. Այսոյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, մասն Ա, Կահիրե, 1961, էջ 444—445։

² Fr. Ar. Mirzolian, նշվ. աշխ., էջ 19։

³ Ա. Այսոյան, նշվ. աշխ., էջ 445։

⁴ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիման, թղթ. 59, վավ. 597։

⁵ «Պայքար», Բոստոն, 4. XII. 1957։

¹² Նույն տեղում։

րահանայի բնակարան լինելուց բացի, Սինգապուրի հայության համար ծառայում էր որպես հավաքատեղի և ժամանակավոր հյուրանոց նոր եկած կամ ծերացած և աղքատ հայերի համար¹³։

XIX դ. 30—40-ական թվականներին Սինգապուրի հայության թիվը հաշվվում էր մի քանի հարյուր։ Ծնանդուն հայերը ավելացրեցին իրենց տները, խանութների թիվը։ «Հայկականի» կողքին արդեն կար «Սարգսյան փողոցը» ի պատիվ Հովհաննես Շահնազար Ասրազյանի, «Մարտիրոսյան նրբուղին»¹⁴։ XIX դ. 30-ական թվականներին Սինգապուրի մի քանի հարյուր հայությունը քիչ չպետք է համարել, քանի որ պաշտոնական տվյալների համաձայն 1930 թ. Սինգապուրում ապրում էր ընդամենը 4500 մարդ¹⁵։ Այս ժամանակից հայտնի է Խ. Մովսիսյանը, որին է վերագրվում ծովից տարածք նվաճելու և այդ տարածքի վրա շինություններ կառուցելու առաջին գաղափարը, որի համար արժանացել է հիշատակության ու զնահատականի՝ Սինգապուրին նվիրված ուսումնասիրություններում։ Սրա կողքին շարունակում էին իրենց ակտիվ գործունեությունը Արիստակես և Հարություն Սարգսյան եղբայրները, որոնք, ինչպես ասացինք, այսօր տեղ էին տեղափոխվել Մալակկայից և քաղաքի գործարար շրջաններին հայտնի էին «Մուլակկացի հայեր» անունով։ Կարճ անց Սինգապուրում հայտնի դարձան Հակոբ Հարությունյանը, Նսայի Ջաբարյանը, Սիմոն Ստեփանոսյանը, Մարտիրոս Արզարը, Սեթյան եղբայրները և ուրիշներ, որոնք խոսում ընդհանուր և ընդհանուր քաղաքի առևտրատնտեսական կյանքում։ Այս հայերը ակտիվորեն մասնակցում էին նաև հայ զաղթօջախի ազգային կյանքին, նպաստում էին նրա համախմբմանն ու ամրապնդմանը¹⁶։

1840—1850-ական թվականներին Սինգապուրում և նրանից դուրս մեծ ճանաչում ունեցող Բազիլ Ջոակիմի (Բարսեղ Հակոբի) ազամանդի վաճառքի տունը, որը մասնաճյուղեր ունեցող աշխարհի շատ երկրներում, Բազիլ Ջոակիմի առևտրատունը, գրասենյակները և խանութները գտնվում էին «Ներսես Բազիլ» փողոցի վրա, որ հայանուն լորրորդ փողոցն էր Սինգապուրում։ Ա. Միրզոյանի վկայությամբ, այս փողոցը մինչև վերջին ժամանակներս պահում էր իր հայկական անունը¹⁷։ Բազիլ Ջոակիմի երեք զավակներն էլ փաստաբաններ էին, որոնք Սինգապուրում, Կուալա-Լումպուրում հիմնել էին իրավաբանական ծառայությունների հիմնարկներ։ Դրանցից երկուսը մինչև վերջերս գործում էին իրենց հիմնադիրների անվան տակ։

Նուրադեմի նվիրակ Իսահակ ծայրագույն վարդապետի թողած ճանապարհորդական գրառումներից երևում է, որ 1842 թ. Սինգապուրի հայերն արդեն ունեին կազմակերպված ազգային կյանք։ Հայերն առևտրական համարձակ գործարքներ էին կատարում։ Նրանք ապրանքներ էին ներմուծում և արտահանում եվրոպական երկրներ։ Ինչպես երևում է Իսահակ վարդապետի օրագրությունից¹⁸ և «Ազգասերի» հրատարակած նյութերից, հայերը առևտուրը կատարում էին սեփական նավերով և կախման մեջ չէին օտար նավատերերից։ Հայկական «Հիրո», «Հարություն Արզար», «Կատերինե Արզար», «Հովսեփ Մանուկ», «Հովսեփյան», «Աննա Մարիա», «Շահնուտա» և մյուս նավերը Սինգապուրից ուղերթեր էին կատարում դեպի Կալկաթա, Մադրաս, Բոմբեյ, Շանհայ, Կանտոն, Ֆիլիպիններ, Բիրմա, Ինդոնեզիա և այլուր¹⁹։

Սինգապուրի XIX դ. 40—50-ական թվականների հայ զաղթօջախի ակնառու դեմքերից է եղել Ս. Ստեփանոսյանը։ Նա «Արզար» և Ստեփանոսյան առևտրատան տնօրենն էր։ Ահա թե ինչպես է Մ. Բազիլագյանը բնութագրել Ս. Ստեփանոսյանին՝ նրա մահվան առթիվ գրած մահախոսականում։ «Նրա մոտ խորհրդո աղերսական իջաններ անգլիացիին ի վտանգու վաճառաց իւրոց, և զամենազոր յանձարն զճար հաներ տառապանացն։ Աղքատ և հպարտ մալայացիին զհայնիւրե զոք զուարթնոցն... բազմահար շինացին դիմեր զնա զոր հանապազ, և մեծագանձն բորնեացին անկաներ նպաստեաց նորա... Իսկ նա արդարեւ այր մարդասեր զամենեւինն ընդուներ սիրով յանձնանձեր զթով հորդորեր աննախանձ խորհրդովն ի շահ և ի յօգուտ անձանցն։ Նրան էին դիմում նաև իր հայրենակիցները Վասն պէս պէս կարեանց իւրեանց։ «Մովհանայանց և

¹³ «Պայքար», 6. XII. 1957։

¹⁴ Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 444—445։

¹⁵ C. B. Brucley, նշվ. աշխ., էջ 371։

¹⁶ Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 445։

¹⁷ Fr. Ar. Mirzorian, նշվ. աշխ., էջ 32—33։

¹⁸ «Ազգասեր», Կալկաթա, 1846, հ. Բ, թիվ 45, էջ 204։

¹⁹ Նույն տեղում, հ. Ա, թիվ 20, էջ 219։

ընդարձակ տուն նորա ասպանչական վայելուլ էր ամենայն մերազգի վաճառականաց, տղանդըխ-
առցն և աստանդելոցն²⁰։

Ընդհանրապես հաջող գործող հայկական ընկերություններն ու առևտրատները երբեմն նաև
մեծ վնասներ էին կրում մրցակցությունից։ Այստեղ էլ հայերի մշտական մրցակիցներն ու հա-
կառակիրները՝ անգլիական գաղութարարները, հանգիստ չթողեցին հայերին։ Սկզբում մեկ-
երկու մեծահարուստ հայերի, ապա ընդհանրապես բոլորի դեմ սկսվեց կազմակերպված հալա-
ծանք։ Խոսելով Հեռավոր արևելքի, Մինգապուրի և նրա հարևան շրջաններում հայերի տնտեսա-
կան վիճակի մասին, Ն. Չաղլյանը նշում է, որ Հնդկաստանի նվաճումից հետո մեծ հաջողու-
թյուններ ունեցող հայերը անգլիացիների կողմից «մեծ հարված ստացան, թեև զանիկա կործա-
նել չկարողացան նաև այս շրջաններում²¹։ «Ազգասերներն անգլիական մի թերթից թարգմանա-
բար բերել է անգլիացիների հայահալած քաղաքականության մի փաստ, որը վերաբերում է
Մինգապուրի հայերին։ Խոսքը ձեռքարկված երկու հայ վաճառականների մասին է, որոնց
ունեցվածքը և դրամագլուխը անգլիացիները բռնագրավել էին՝ նրանց հասցնելով ծայրահեղ
խնայողության։ Նրանք խմբագրին բողոքել էին անօրինականության դեմ և օգնություն խնդրել²²։
Չնայած դժբախտության մեջ ընկած հայերն օգնության և աջակցության խնդրանքով դիմել էին
օտարներին, սակայն նրանց օգնության ձեռք մեկնողները եղան հայրենակիցները։ Հայտնի է, որ
Մինգապուրի հայերը հավաքել և դժբախտության մեջ ընկած իրենց հայրենակիցների փոխարեն
վճարել են նրանց 95000 ռուպիի պարտքը²³։

1849—1853 թթ. Մինգապուրի հայության կյանքի հայելին կարող է հանդիսանալ նույն թվերին
տեղում հրատարակված «Ուսումնասիրա քաղաքական, գիտական և առևտրական երկարաթա-
թերթը։ Այն սկզբում տպագրվում էր Ա. Սեթյանի «Արփի» վիճակագրանում։ Հետագայում «Ուսում-
նասիրա» խմբագիրը հիմնեց իր «Մասիս» վիճակագրանը, որտեղ էլ տպագրվում էր պարբերա-
կանը²⁴։ «Ուսումնասիրա» խմբագիր հրատարակիչը Գ. Գալստյանն է եղել։ Դժբախտաբար նրա
կյանքի և գործունեության մասին գրեթե ոչինչ չգիտենք, բացի այն, որ 1849 թ. նա ձեռնամուխ
է եղել «Ուսումնասիրա» հրատարակմանը, իսկ 1853 թ. դադարեցրել է երկարաթաթերթի տպա-
գրությունը և հեռացել Ալիստրալիա²⁵։ Թերթի հիմնադրման շարժառիթի մասին նույնպես քիչ
բան է հայտնի։ Թե ինչու է Գ. Գալստյանը «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյանի» ֆոնի վրա
անհրաժեշտ համարել հեռավոր Մինգապուրում հրատարակել իր թերթը՝ նույնպես չգիտենք։
Հավանաբար, նա մենակ չի եղել. ինչպես Մինգապուրում, այնպես էլ Հնդկաստանում, Բիրմա-
յում, Խնդոնեզիայում «Ուսումնասիրա» խմբագիրը համախոհներ է ունեցել։ Թերթը Կալկաթայում,
Մադրասում, Բոմբեյում, Բաթավիայում, Դանգունում, Պինանդում, Կանտոնում, Սուրաբայայում,
Ջապարայում և այլուր գործակալներ է ունեցել, որոնք ոչ միայն թղթակցել են թերթին, այլև
նպաստել նրա տարածմանը։ «Ուսումնասիրա» գործակալ է ունեցել անգամ Ջոյունիայում և
այլուր²⁶։

Իսկ ի՞նչ նյութեր է տպագրել Մինգապուրի հայկական թերթը, ո՞ւմ շահերին է նա ծառայել։
Ի՞նչ կա այնտեղ Մինգապուրի հայության մասին։ «Ուսումնասիրա» բոլոր ճամբարներն ունեն
հատուկ առաջնորդողներ։ Այդ առաջնորդողներում «անդադար հոլովելով ժաղը», «լուսավորու-
թյուն», «հայրենասեր», «ազգասեր» բառերը, — նկատել է ակադ. Ա. Կարինյանը, — «Ուսում-
նասիրա» խմբագիրը որոշակի կերպով պաշտպանում է հայ հետադիմական կղերականների իրա-
վունքները և հայացքները²⁷։ Գ. Գալստյանը այս բոլորը կատարել է այնքան շեշտված, որ
անգամ արժանացել է «Արշալույս» Արարատյանի խմբագիր Ղ. Պալթաղարյանի դիտողությանը։
«Ուսումնասիրա» առաջին հերթին մանրամասն տեղեկություններ էր տպագրում Մինգապուր

20 Նույն տեղում, թիվ 16, էջ 125։

21 Հ. Ե. Գ. Չաղլյան, Պատմութիւն հայոց հայկազեան տերութեանց ի սկզբանէ
մինչև մեր ժամանակն, Վիեննա, 1873, էջ 441։

22 «Ազգասեր», 1846, հ. Բ, թիվ 49, էջ 281։

23 Նույն տեղում։

24 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1,
Երևան, 1956, էջ 373։

25 Գ. Զարբհանյան, Պատմութիւն հայերեն դպրութեան, հ. Բ, Վենետիկ, 1873,
էջ 468։

26 «Ուսումնասիրա», Սինկափոր, 1850, հ. Բ, թիվ 10, էջ 70—72։

27 Ա. Բ. Կարինյան, նշվ. աշխ., էջ 300։

մտնող հավերի, դրանց չրաճավալի, այդ հավերի բերած ապրանքների քանակի, տեսականու մասին: Այդ մանրամասն ցուցակներում հանդիպում ենք բազմաթիվ հայանուն և հայերին պատկանող հավերի, ռուսումնասերի» հրատարակած նյութերից իմանում ենք նաև հայ վաճառական-ներին հետաքրքրող ապրանքների տեսականու մասին: Արևելյան ավանդական համեմունքները և կիսաֆաբրիկատներն իրենց առաջնային տեղը զիջել էին երկաթին, արճճին, պողպատին, նավթին, շինանյութին, պղնձին, պողպատին և այլնին²⁸:

Թերթն իր էջերում տեղ էր տալիս նոր եկած հայրենակիցներին, հայտնում էր նրանց անուն-ազգանունը, կոչ անում աշակցել նրանց տեղավորվելուն և աշխատանքով ապահովվելուն: Այդ տեղեկություններից իմանում ենք, որ Սինգապուր էին գալիս հիմնականում շնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի և նրանց հարևան երկրների այն հայերը, որոնց առևտրական ասպարեզներից դուրս էին մղում եվրոպական երկրների առևտրական պետական ընկերությունները²⁹: Փոստումնասերը լուրերի բաժնում տեղ է տվել նաև Սինգապուրի հայերի ներքին կյանքի մանրամասներին, հայկական եկեղեցու ժողովներին: Նրանք հողվածներ և տարբեր լուրեր են հրատարակվել նաև շնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Չինաստանի հայկական գաղթօրհաններին ներքին կյանքի վերաբերյալ, որոնք Փոստումնասերին էին ուղարկում նրա գործակալները:

Գ. Գալստյանը, արտատպելով «Ազգասեր Արարատյանի» խմբագիր Մ. Քաղիադյանի՝ չինահայերին ուղղած ազգային-առևտրական ընկերություններ ստեղծելու հորդորը, իր հերթին ձայնակցում է «հարգելի պաշտոնակցին»: Սինգապուրի իր հայրենակիցներին նա հիշեցնում է, որ ոչ հեռու անցյալում շնդկալու արևելքի առևտրական և ապրանքատար հավերի մեծ մասը գտնվում էր հայերի ձեռքին, հայերը հոյակապ սպալատներ և գործատներ ունեն, որոնց արտադրանքն իրենք են վաճառում, սակայն չբավարարում էին իրենց ինքնահարկը և աճող անգլիացիները դառնում են վտանգավոր մրցակից հայերի համար: Անգլիացիներին դիմակայելու և նրանց մրցակցությունից լուր կտլ չգնալու համար Փոստումնասերն իր հայրենակիցներին կոչ էր անում համախմբվել ազգային-առևտրական ընկերությունների մեջ³⁰:

«Փոստումնասերը» քաղելով Պուլի և Եվրոպայի հայկական թերթերից, իր ընթերցողներին բազմաթիվ հետաքրքիր լուրեր էր հաղորդում Ռուսաստանում ապրող հայերի մասին: Մի առանձին ոգևորությամբ և հպարտությամբ է մեկնաբանվել այս կամ այն հայի Ռուսաստանում ունեցած հաջողությունը: Տպագրելով իշխանուհի Բեհրովային ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանով պարգևատրելու լուրը, թերթն իր կողմից ավելացրել է. «Պետերբուրգի մեջ հայ շուկինը առաջինն է, որ արժանացել է նման պատվին»³¹: Մեկ այլ անգամ, խոսելով իշխան Մ. Արդուրյանին ուսական շքանշանով պարգևատրելու մասին, թերթն ավելացնում է, որ նա Ռուսաստանին հավատարիմ ծառայող, մեծ համարում ունեցող պետական գործիչ է³² և այլն: Բուրդո դեպքերում, Գ. Գալստյանը Ռուսաստանի կամ Ռուսահայոց մասին խոսում է մեծ համակրանքով և սիրով: 1851 թ. համարներից մեկում տպագրված «Արմավիր քաղաքի Զեքեհիա» հոդվածը մի շերտ գրված է նվիրված հայ-ռուսական հարաբերություններին և ուսումնասիրողի կողմից հայերի հովանավորությանը³³:

Հոռետեսական բնույթ են կրում Փոստումնասերի վերջին առաջնորդողները: Նրա խմբագիրն «ազգի վերածնության» համար իր հայրենակիցներին կոչ է անում մեկնել Ավստրալիա, ուր, ըստ Գ. Գալստյանի, կան գործելու լայն շրջաններ, ռուսկո հանքեր, հարստանալու մեծ հնարավորություն³⁴:

Ավստրալիա մեկնելու իր կոչերը հրատարակելով՝ Գ. Գալստյանը, անշուշտ, արտահայտում էր շնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Չինաստանի, Սինգապուրի և շնդկալու արևելքի հայկական այն շրջանների տրամադրությունները, որոնք դուրս էին մղվել այդ շրջանների շուկաներից կամ այլևս չէին դիմանում մրցակցությանը: Բացի այդ, կար նաև մեկ այլ հանգամանք. հիշված երկրների քաղաքները լցված էին նոր եկած բազմաթիվ շուղայեցիներով, որոնք հիմնականում ապրում էին կրոնական համայնքների, աղքատանոցների, բարեգործական կազմակեր-

28 «Փոստումնասեր», 1850, հ. Բ, թիվ 32, էջ 126:

29 Նույն տեղում, 1851, հ. Գ, թիվ 43, էջ 169:

30 Նույն տեղում, թիվ 44, էջ 167:

31 Նույն տեղում, թիվ 30, էջ 117:

32 Նույն տեղում, թիվ 94, էջ 373:

33 Նույն տեղում, թիվ 95, էջ 378:

34 Նույն տեղում:

պոթյունների հաշվին, որոնց հնարավորություններն անսահմանափակ չէին: Եթե նոր եկածները մեկնեին Ավստրալիա և աշխատանք գտնեին, ապա հայկական հողերը և աղքատախնամ մարմինները կաղապարվեին ավելորդ բեռից³⁵: Բանը հասնում է նրան, որ Գ. Գալստյանն անցնում է գործնական բայի: Ինչպես նշվեց, նա փակում է իր վիժադարանը, դադարեցնում թերթի տպագրությանը և եթե սեր ազգիս և յառաջադիմության նորա մեկնում է Ավստրալիա, ուր մնում է անհայտության մեջ³⁶:

Ցավոք, շատ բան չգիտենք նաև Սինգապուրի հայերի այս ժամանակվա հասարակական և մշակութային կազմակերպությունների մասին: Միայն Ուսումնասիրում տպագրված մի քանի հաղորդումներից հնարավոր դարձավ պարզելու հետևյալ մոտավոր պատկերը: Սինգապուրի հայերն ունեցել են՝ «Ազգային ժողով», որը պարբերաբար հավաքվել և քննարկել է գաղթաշախի ներքին կյանքին վերաբերող տարբեր հարցեր: «Ազգային ժողովն» ամենամյա իր հավաքում րոտել է «կառավարչություն»՝ ամբողջական ղեկավարությամբ: Թեև նրա հիմնադրման ժամանակի մասին ոչինչ չգիտենք, բայց ելնելով այն բանից, որ տասնութերորդ հավաքը տեղի է ունեցել 1851 թ. և այն, որ նման հավաքը գումարվում էր տարին միայն մեկ անգամ, ապա այն հիմնադրված պետք է լինի 1833 թ., այսինքն՝ գաղթաշախի ամենից մարդաշատ և եռուն շրջանում: Սինգապուրի հայերը թեև չկարողացան ազգային դպրոց բանալ, բայց հեռու չէին հայրենի՝ բառ ու բանից: Ինչպես վկայում են տարբեր ժամանակներ Սինգապուր այցելած գրեթե բոլոր պահանատները, հայերը, աննշան բացառությամբ, գիտեին մայրենի լեզուն, կարգում և գրում էին հայերեն: Այստեղ հայերից շատերը ստանում էին հայկական թերթեր և ամսագրեր՝ «Ազգասեր», «Ազգասեր Արարատյան», «Արշալույս Արարատյան», «Շտեմարան», «Եղբայրասեր», հետագայում՝ նաև՝ «Բազմավեպ», «Արարատ», «Արեւիք», անգամ «Մասյաց աղափնի» և այլն:

XIX դ. վերջերի Սինգապուրի հայ գաղթաշախի վերաբերյալ առանձին հիշատակություններ են թողել այնտեղ այցելած էջմիածնի և Երուսաղեմի նվիրակները: 1870-ական թվականներին, ականատեսների վկայության համաձայն, Սինգապուրում ապրում էին մոտ հարյուր տուն հայեր, որոնք Հնդկաստանի՝ Անգլիայի լծեն ազատ կողմերուն վաճառականության մեծ մասը ձեռքերնին՝ կապահին³⁷:

Սինգապուրի հայերի հիշյալ շրջանի մասին համառոտ, բայց հետաքրքիր տեղեկություններ է թողել այնտեղ այցելած Նոր Զուգայի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսը: Էջմիածին ուղարկած զեկուցագրում նա հայտնում է, որ Սինգապուրում գործում էր ճիշտ է թվով ոչ մեծ, բայց համախմբված, հայրենասեր, գործույթ մի գաղթաշախ, որն առատաձեռն է հոգւտ նոր Զուգայի գյուղերի իրենց օգնակարոտ հայրենակիցների, էջմիածնի և այլ կարիքների նկատմամբ³⁸:

XIX դ. վերջին թուրքական կառավարության կազմակերպած հայկական կոտորածների և վայրագությունների մասին լուրերը հասան նաև Սինգապուր: Այստեղ էլ հայերն իրենց բողոքի ձայնը բարձրացրին՝ հանուն իրենց եղբայրների պաշտպանության: Ինչպես վերևում ասացինք, հայերը լավ էին հասկանում, որ Հայաստանն ու հայությունը կարող են փրկվել միայն ուստական օգնության շնորհիվ: 1895 թ. հունվարի 25-ին Սինգապուրի հայերի «Եկեղեցական մարմինը» գումարում է իր արտակարգ նիստը, որը տեղի հայության անունից հատուկ նամակով դիմում է կաթողիկոսին «խնդրելով... դիմել առ վեհափառ մեծ կայսրն Նիքոլայ: Վի նա միջամտիս լիցի վասն հայոց տառապելոց ի Հայաստան և փրկեսցի զնոսա ի շար կապանաց տաճկան»³⁹:

XX դ. սկզբին Սինգապուրի հայկական համայնքը, թեև փոքրացած, բայց շարունակում էր գոյատևել խառնալեզու և բազմակրոն այդ քաղաքում: Դեռ շարունակում էին գործել հայկական մի քանի առևտրատներ, անգամ ընկերություններ, որոնք իրենց մասնաճյուղերն ունեին Ասիայի և Նիդրոպայի մի շարք երկրներում: Հայերին էին պատկանում քաղաքի ամենախոշոր հյուրանոցներից մի քանիսը: Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում կառուցված երկհարկանի երիտասարդներ, որը միաժամանակ հյուրանոց-կայան էր նոր եկած, ծերացած և օղնակարոտ հայերի համար, XX դ. սկզբին արդեն խարխուլվել էր: 1905 թ. այն հիմքից քանդվեց և ամբողջությամբ վերաշինվեց: Նենքի պատին կա հետևյալ արձանագրությունը՝ «Բնակարանս այս է պետոս հայ հոգեորականաց նորոգ կառուցաւ արդեամբ բարեպաշտուհի տիկին Նանաչանի Յովհաննես Ծահ-

35 Նույն տեղում, 1853, թիվ 85, էջ 378:

36 Նույն տեղում:

37 Զ. Ե. Գ. Չաղչյան, նշվ. աշխ., էջ 512:

38 «Արարատ», էջմիածին, 1877, էջ 238:

39 «Մանկավարժանոց», Թիֆլիս-Պետերբուրգ, 1882, Ձ 1, էջ 8:

Նազար Սարգսեան, որ նորեկացի իբրեւ «եփականութիւն Ս. Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցւոյ Սինկապուրայ, ի յիշատակ հանգուցեալ սիրելի ամուսնոյն իւրոյ: Օրհնեալ լինի նուիրատու եկեղեցասէր ազնուհի տիկին»⁴⁰:

XX գ. սկզբի Սինգապուրի հայկական գաղութի վերաբերյալ Թուրքիկ. քայքայ հետաքրքիր տեղեկութիւններ է թողել «Վանեցի» կեղծանվամբ մի հեղինակ: Պարզվում է, որ 1914 թ. Սինգապուրում ապրում էին մի քանի տասնյակ տուն հայեր, որոնք հիմնականում զբաղվում էին պանդոկապանությամբ: Նրանք տիրում էին Սինգապուրի երեք հռչակավոր պանդոկներին, որոնցում միայն միլիոնատերեր է նշանավոր վաճառականներ էին իշխանում: Կային նաեւ հանձնակատարներ, ընդարձակ խանութներ ունեցողներ, բոլորն էլ նշուխական լավ վիճակում⁴¹: Վանեցի ուղեգրողը միաժամանակ ցավով նկատել է, որ թեւեւ սինգապուրահայերի ամառը սերունդը հիմնականում հայախոս շուգահայեր են, ընդ որում սերունդը, ուսանելով անգլիական դպրոցներուն մէջ, կ'մոռանա իր լեզուն, ազգային հիշատակները և հաճախ եվրոպացիներու հետ ամուսնանալով կ'ուղևորվի անոնց հետ...⁴²:

Սինգապուրի հայ գաղթական մասին բավականին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում Երուսաղեմի հայկական պատրիարքարանի առաջնորդ Բ. Գուշակյանը, որը 1917 թ. այնտեղ էր գնացել հանգանակություն նստարելու: Նպաստ Մերձավոր արեւելքի արաբական երկրներում ապաստանած հայ գաղթականության: Բ. Գուշակյանի նոթագրութիւններից երևում է, որ Սինգապուրի հայ գաղթական թեւ փոքրացած, բայց շարունակում էր գոյատեւել: Հայկական գաղթականութեւ հետ ու կենտ մնացել էին անցյալի մեծահարուստ նստաբլները. նրանց զավակներն է: Նոր եկողների հիմնական զբաղմունքը եղել է պանդոկապանությունը, իրավաբանական տարբեր ծառայությունները, լուսանկարչությունը, սպասարկման ոլորտի տարբեր ծառայությունները, մանր առևտուրը և այլն: Միայն Ստեփանոս Պողոսի, Նոթարյան եղբայրներն է Միքայիլ Մարտինի առևտրական տներն էին, որ աչքառու դիրք ունեին Սինգապուրում: Նրանցից առաջինները մասնաճյուղեր ունեին նաեւ Լոնդոնում և Բանգկոկում, Հայերին էին պանդոկապանութեւ Սինգապուրի մի քանի հյուրանոցներ, որոնցից մեկը՝ «Ռաֆլզ», համարվում էր քաղաքի ամենահարմարավետ ու խոշորը⁴³: Ի հակառակն «Վանեցի» ուղեգրողի, Բ. Գուշակյանը զարմանքով գրում է, որ հայերն խոսում են անգամ Սինգապուրում ծնված հայերը: Նրա վկայությամբ, Սինգապուրի հայերը իրենց պահպանում ու ընտանեկան հարկին վերջ եվրոպականացված կարգ ու սարքին հետ կ'պահանջ ազգային բոլոր պարզությունը և հայկական ոգով շերտությունը: Եւ աւ բոլորը դպրոցի և մամուլի բացակայության պայմաններում, հետո հեռաստանում ընկած մի փոքրիկ կղզւում⁴⁴:

Երուսաղեմ վերադարձի ճանապարհին Բ. Գուշակյանը 1917 թ. նորից այցելեց Սինգապուր: Նախօրը եղած պայմանավորվածության համաձայն Սինգապուրի հայկական համայնքի սեպտեմբերի 6-ի ընդհանուր ժողովում կազմակերպվեց Հայկական բարեգործական ընկերության Սինգապուրի մասնաճյուղը: Հայ բարեգործական ընկերության մասնաճյուղի վարչության ղեկավար մարմնի մէջ մտան Վերդին Ավետ Սարգիսը, Մերի Միքայիլ Մարտինը և Հաղթուհի Մկրտիչ Հարությունյանը⁴⁵:

Չինաստանի, Ինդոնեզիայի և Բիրմայի հայկական գաղթականների հայության նման Սինգապուրի հայությունը ճապոնական զավթումների տարիներին ինչպես նշուխական, այնպես էլ մարդկային ծանր կորուստներ կրեց: Պատերազմի հենց սկզբին անգլիական զինվորական իշխանությունները բռնազրկեցին թե՛ հայկական եկեղեցին և թե՛ հարակից կառույցները՝ դրանք վերածելով ուղեգրողների պահեստի և ուղեգրող շտաբի: Նման օբյեկտը չէր կարող վրիպել ճապոնական ուղեգրող ամբաստանի աչքից և այն ուղեգրողները, եկեղեցին և հարակից կառույցները մեծապես տուժեցին և կիսավեր դարձան⁴⁶: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Սինգապուրում ապրած մի հայի վկայությամբ համաձայն, «Սինգապուրի հայկական համայնքը շատ նեղություններ կրած է ճապոնացիներին: Բոլոր հայերը քեմիկներու (համակենտրոնացման ճամբար-

40. «Արեւ», 7. XII. 1938.

41. «Վան» Տոսպա, Վան, 1914, թիվ 22—24.

42. Նույն տեղում:

43. «Արեւ», XII. 1937.

44. Բ. Գուշակյան, Հնդկահայք, Երուսաղեմ, 1947, էջ 339.

45. Նույն տեղում:

46. «Նոր Ազդարար», Կալկաթա, 1954, թիվ 14—16, էջ 55.

ների— Ռ. Ա.) մեշ արգելափակված են և տարապարհակ աշխատանքների ենթարկված։ Անոնցման ռմանք ճապոնացիներու խժովությունները և վայրագությունները չկրնալով տոկալ մեռած են⁴⁷։

Ճապոնական օկուպանտներին բարեբախտաբար չհաջողվեց հայտնաբերել զաղտնարանում թաքցրած եկեղեցապատկան գույքը և այն չկողոպտվեց, ինչպես այդ եղալ Ռանգունի հայկական եկեղեցու՝ հետ⁴⁸։

Պատերազմի ավարտից անմիջապես հետո Սինգապուրից հեռացված և համակենտրոնացման ճամբարներից ազատված հայերը սկսեցին վերադառնալ քաղաք, վերաշինել իրենց տները, վերականգնել քայքայված տնտեսությունը և ձեռնամուխ լինել հին գործին⁴⁹։

1950-ական թվականներին Սինգապուրի հայկական գաղթօջախի սոցիալական պատկերը առաջվանը չէր։ Նախկին վաճառականների փոխարինելու էին եկել ավտոգրասենյակների վերակացուները (Ջ. Սարգսյան և Բ. Հովհաննիսյան), գրասենյակի տարրեր պատասխանատու պաշտոնավարներ (Մարտիրոս և Մկրտիչ Մելքոնյաններ, Գ. Մելքոնյան, Ն. Հովհաննիսյան և ուրիշներ), պանդոկի տերեր, կառավարիչներ և ծառայողներ (Գ. Գասպարյան, Գ. Առաքելյան), նշանավոր իրավաբաններ (Գ. Սեթյան, Ն. Քրիստոփորյան)։ Կային նաև առանձին խոշոր ներմուծող և արտահանող վաճառականներ (Ա. Գալուստյան, Հ. Հարությունյան) և ուրիշներ⁵⁰։ Հայերն ունեին իրենց «Հայկական ակումբը», որն իրար գլխի էր հավաքում Սինգապուրի հայերին։ Պահպանվում էին այստեղի հայերի ավանդական դարձած հավաքները, փոխադարձ այցերը և այլն։ Շարունակում էր գործել Սինգապուրի հայոց եկեղեցու կառավարչական մարմինը, որը բաղկացած է եղել հինգ ընտրովի անդամ-անդամուհիներից։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկար ժամանակ նրա անդամներն էին Ա. Առաքելյանը, Բ. Հովհաննիսյանը, Ջ. Սարգսյանը, Գ. Մելքոնյանը։ Եկեղեցու կառավարչական մարմնին կից կար նաև նրա ղեկավար կազմի մեջ մտնող երեք անդամներից կազմված եկեղեցու անդամապահ մարմին⁵¹։ 1954 թ. Սինգապուրում Ա. Միրզոլյանի կատարած շնչագրությունից երևում է, որ այն ժամանակ գաղթօջախում օրաբեկեցիկ կյանք էին վարում 60 շունչ հայեր⁵²։

Սինգապուրի հայկական գաղթօջախը, թեև փոքրացած, այսօր էլ գոյատևում է։ Հայերը շարունակում են առաջվա նման զբաղվել առևտրով, ռմանք զանազան ծառայություններ են կատարում վարչական հիմնարկներում, կան հյուրանոցի գործով զբաղվողներ։ Նրանք սիրով ու հպարտությամբ են նշում Սովետական Հայաստանի տարեդարձները, արձագանքում են հայրենիքում կատարվող իրադարձություններին։

АРМЯНСКАЯ КОЛОНИЯ В СИНГАПУРЕ

РАФИК АБРАМЯН

Резюме

Армяне в Сингапуре обосновались, начиная с 1819 г. В 1820 г. они уже имели там три крупные торговые компании. В 1835—1836 гг. в Сингапуре была построена армянская церковь. Зеркалом экономической и социальной жизни сингапурских армян являлась издававшаяся там армянская газета «Усумнасер». С захватом острова японскими оккупантами во время второй мировой войны армяне были загнаны в центрационные лагеря, где многие из них погибли.

Небольшая армянская колония в Сингапуре продолжает существовать и поныне.

47 «Պայթար», 4. XII. 1957:

48 «Նոր Ազդարար», 1954, թիվ 14—16, էջ 55:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում, էջ 55—56:

51 «Պայթար», 7. XII. 1957:

52 Fr. Ar. Mirzolian, նշվ. աշխ., էջ 33: